304918 Իրավ
658-Ա12

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 471
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» «10» 2019 թ.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, մի կողմից, և «Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրենի ժ/պ Հ. Ալեքսանյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատվիրատուի կողմից հատկացված միջոցներն ուղղել 2019 թվականի դեկտեմբերին «Միասին» ներառական մանկապատանեկան ցուցահանդես» ծրագրի իրականացման հետ կապված ծախսերին՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի (հավելված N 1) և նախահաշվի (հավելված N 2):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 658-Ա/2 հրամանի՝ հիմք ընդունելով «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով իրականացվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Մշակութային կրթության ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ» անվանակարգի մրցութային հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 13-ի նիստի արձանագրությունը՝ հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «1068. Արվեստների ծրագիր» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման «Աջակցություն ներառական ծրագրերի իրականացմանը» տողով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին:

2.1.2. Պայմանագրի 2.3.7-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, քննարկել և Կատարողին ներկայացնել նախահաշվում փոփոխություն կատարելու կամ նոր ծախսային ուղղության ամրագրում կատարելու կամ դրանց կատարումը մերժելու մասին իր եզրակացությունը:

2.1.3. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահանջել ներկայացնել Պայմանագրի 2.3.3-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծրագրի, նախահաշվի, ինչպես նաև Պայմանագրի այլ պարտադիր պահանջները:

2.3.2. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին:

2.3.3. Մինչև Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետի ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն (ֆինանսական և բովանդակային) իր կողմից իրականացված ծախսերի և կատարված աշխատանքի մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակում է Պատվիրատուի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ), իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը՝ կցելով էլեկտրոնային կրիչներ՝ լուսանկարներ, հրավիրատոմսեր և այլն):

2.3.4. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին ենթակետում նախատեսված գումարի 1 տոկոսի չափով:

2.3.5. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ միջոցառման համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկույթ՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.6. Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ Պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները վերացնելու նպատակով:

2.3.7. Պայմանագրի գործողության ընթացքում, մինչև փաստացի ծախսերի իրականացումը, Պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված գումարի 10 տոկոսը գերազանցող ծախսային ուղղությունների գումարների փոփոխությունների կամ նոր ծախսային ուղղության ամրագրման անհրաժեշտություն առաջանալու դեպքում (չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը), այդ մասին գրավոր առաջարկություն ներկայացնել Պատվիրատուին:

2.3.8. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով և նախահաշվով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4. Կատարողը իրավունք ունի՝

2.4.1.Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պատվիրատուն Կատարողին հատկացնում է 2058.0 հազար (երկու միլիոն հիսունութ հազար) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն հաստատված նախահաշվի:

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պատվիրատուի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է ընդունման-հանձնման արձանագրություն:

4.2. Մինչև Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների ընդունման-հանձնման արձանագրության ստորագրումը Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի Պայմանագրի կատարմանն ուղղված՝ իր կողմից փաստացի կատարված ծախսերի վերջնահաշվարկը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝ օրենքով սահմանված կարգով:

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում:

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ Պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը:

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը մինչև 2019 թվականի դեկտեմբերի 6-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2020 թվականի հունվարի 16-ը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2020 թվականի փետրվարի 6-ը:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Պայմանագիրը կազմված է 10 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

10.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

---------- Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամ
ՀՀ Կոտայքի մարզ ք. Չարենցավան 5-րդ թաղամաս 2 շ., բն.44
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2052822119731001
ՀՎՀՀ 02693936
Հեռ.՝ 093 09 64 58,055 18 94 75

Տնօրենի ժ/պ՝

---------- Հ. Ալեքսանյան

Կ.Տ.

Հավելված N 1
2019 թ. « 10 » « 25 »
N 471 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Միասին» ներառական մանկապատանեկան ցուցահանդես»

1	Կազմակերպության անվանում	«Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք.Երևան Հակոբ Հակոբյան 3 աջ մասնաշենք 4-րդ հարկ
3	Ծրագրի անվանում	«ՄԻԱՍԻՆ» ներառական մանկապատանեկան ցուցահանդես
3.1	Բովանդակություն	Ծրագրի հիմնական տեսլականը ուղղված է մշակութային կյանքին հանրային ակտիվ մասնակցության ապահովմանը, ներառական մշակութային միջոցառումների լայն քարոզչության իրականացմանը և դեպի մշակութային հաստատություններ քաղաքացիների հարաճուն հոսքի նպաստմանը: «ՄԻԱՍԻՆ» ներառական մանկապատանեկան ցուցահանդեսի իրականացման կարևորագույն ուղերձը, ցուցահանդես, որն իր շուրջն է հավաքում շնորհալի, կամային ու ջանասեր մանուկներին և պատանիներին, որոնք բացահայտում են իրենց՝ ուսման մեջ, ստեղծագործական աշխատանքում, մասնագիտության մեջ: «ՄԻԱՍԻՆ» ներառական մանկապատանեկան ցուցահանդեսը նախատեսվում է իրականացնել Երևանում և ՀՀ մարզերում գործող գեղարվեստական կրթություն և գեղագիտական դաստիարակություն իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող հաշմանդամ և ոչ հաշմանդամ շնորհալի երեխաների մասնակցությամբ: Ցուցահանդեսը կիրականացվի Երևանում, դեկտեմբերի 3-ին և նվիրված կլինի Հաշմանդամների միջազգային օրվան: «ՄԻԱՍԻՆ» ներառական մանկապատանեկան ցուցահանդեսի հայեցակարգային առանձնահատկությունն է՝ ընդհանուր ստեղծագործական ծրագրերի միջոցով հաշմանդամություն և ոչ հաշմանդամություն ունեցող երեխաների միավորումը, ինչը համապատասխանում է 1989-ին ՄԱԿ-ի Գլխավոր

		ասամբլեայում ընդունված «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի» դրույթներին (հ.29):
3.2	Նպատակ	**Ծրագրի նպատակն է** • հրավիրել հասարակության ուշադրությունը հաշմանդամություն ունեցող երեխաների ստեղծագործական գործունեությանը՝ դիտարկելով այն որպես երեխաների ինքնադրսևորման և ինքնաարտահայտման արդունավետ միջոց. • խթանել երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացումը՝ դիտարկելով այն որպես լուրջ ներուժ մշակույթի բնագավառում. • նպաստել հաշմանդամություն ունեցող երեխաների ինտեգրմանը • բացահայտել և աջակցել շնորհալի երեխաներին և պատանիներին • նպաստել երեխաների ստեղծագործական գործունեությանն առնչվող ոլորտի մասնագետների միջև համագործակցության ձևավորմանը • քննարկել ոլորտի մասնագիտական հիմնախնդիրների մանկավարժական և հոգեբանական առանձնահատկությունները: «ՄԻԱՍԻՆ» ներառական մանկապատանեկան ցուցահանդեսի անցկացումը կնպաստի նաև հաշմանդամություն ունեցող երեխաների մոտ դրական բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, ինչն իր հերթին կնպաստի ընդհանուր առմամբ իրենց կենսական որակի բարելավմանն ու բարձրացմանը և, որպես սոցիալապես ակտիվ անձնավորություն, իրենց ձևավորմանն ու կայացմանը: Ծրագիրը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, ինչպես նաև ժամանակակից աշխարհում նրանց լիարժեք ադապտացմանը:
3.3	Անցկացման ժամկետ	2019 թ. դեկտեմբեր 3-5
3.4	Անցկացման վայր	ք. Երևան

3.5	Ակնկալվող արդյունքներ	Մանկապատաներկան ցուցահանդեսի ակնկալվող արդյունքներից է հասարակության խտրական վերաբերմունքի փոփոխությունը հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ, որպես ընդհանուր մշակութային գործընթացի լիիրավ մասնակցի ընկալման ձևավորումը, ինչպես նաև շնորհալի երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում և խթանում. Ներկայում շատ կարևոր է մեծ ուշադրություն դարձնել այս երեխաների գեղարվեստական կրթությանը և գեղագիտական դաստիարակությանը, ինչը կօգնի նրանց ինտեգրվել հասարակություն, ինքնադրսևորվել, ձեռք բերել կամ զարգացնել նոր ստեղծագործական հմտություններ: Ծրագրի կարևորագույն բաղադրիչ ներառականությունը հնարավորություն կընձեռի հաշմանդամություն ունեցող անձանց, տվյալ դեպքում երեխաներին և պատանիներին, ինքնիրացվելու արվեստի ոլորտում: Կբացահայտվի հաշմանդամություն ունեցող մարդկանց ստեղծագործական ներուժը ու ժամանակակից աշխարհում նրանց լիարժեք ինտեգրումը: *Այսպիսով, յուրաքանչյուր միջոցառում քայլ է դեպի նոր մտածելակերպ, դեպի սիրո և հանդուրժողականության մթնոլորտ և դեպի ներառական հասարակություն:*
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Ցուցահանդեսի երեք օրվա ընթացքում նախատեսվում է մոտ 400 այցելու

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024313
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____Ն. Հարությունյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամ
ՀՀ Կոտայքի մարզ ք. Չարենցավան 5-րդ թաղամաս 2 շ., բն.44
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2052822119731001
ՀՎՀՀ 02693936
Հեռ.՝ 093 09 64 58,055 18 94 75

Տնօրենի ժ/պ՝

_____Հ. Վեքսանյան

Կ.Տ.

Հավելված N 2
2019 թ. «10» «25»
N 471 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Միասին» ներառական մանկապատանեկան ցուցահանդես» ծրագրի
իրականացման հետ կապված ծախսերի
(2019 թվականին)

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Գումարը (հազ. դրամ)
1.	**Վարձատրություն** (ներառյալ հարկերը)՝ - ծրագրի համակարգող՝ 120.0 հազ. դրամ	**120.0**
2.	**Տպագրական ծախսեր՝** - հրավիրատոմս՝ 250 հատ x 400 դրամ = 100.0 հազ. դրամ - պաստառ՝ 30 հատ x 1000 դրամ = 30.0 հազ. դրամ - լուսանկարներ՝ 20 հատ x 3250 դրամ = 65.0 հազ. դրամ	**195.0**
3.	**Ցուցահանդեսային նյութեր՝** - լուսանկարների շրջանակ (ռամկա)՝ 20 հատ x 2000 դրամ = 40.0 հազ. դրամ - կտավների շրջանակ (ռամկա)՝ 25 հատ x 15000 դրամ = 375.0 հազ. դրամ	**415.0**
4.	**Նկարահանման ծախսեր՝** - լուսանկարահանում՝ 3 օր x 25000 դրամ = 75.0 հազ. դրամ - տեսանկարահանում՝ 3 օր x 50000 դրամ = 150.0 հազ. դրամ	**225.0**
5.	**Տեխնիկայի վարձակալություն՝** - մոնիտոր՝ 3 օր x 25000 դրամ = 75.0 հազ. դրամ - պրոեկտոր և էկրան՝ 3 օր x 25000 դրամ = 75.0 հազ. դրամ - լուսային սարքավորումներ՝ 3 օր x 30000 դրամ = 90.0 հազ. դրամ	**135.0**
6.	**Տարածքի վարձակալության ծախսեր՝** - լուսանկարչական տարածք (ներառյալ ֆոտոխցիկ, օբեկտիվ, լույս)՝ 2 օր x 85.0 հազ. դրամ = 170.0 հազ. դրամ	**170.0**
7.	**Տրանսպորտային ծախսեր՝** - տրանսպորատային միջոցի վարձակալություն՝ 10 մարդ x 35.0 հազ. դրամ (միջինը) = 350.0 հազ. դրամ	**350.0**
8.	**ԱԱՀ**	**343.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	**2058.0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևան, Կառավարական տուն 2	«Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամ ՀՀ Կոտայքի մարզ ք. Չարենցավան 5-րդ թաղամաս 2 շ., բն.44
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՀ 900011024313 ՀՎՀՀ 02698732	«Ինեկոբանկ» ՓԲԸ ՀՀ 2052822119731001 ՀՎՀՀ 02693936 Հեռ.՝ 093 09 64 58,055 18 94 75
Գլխավոր քարտուղար՝	Տնօրենի ժ/պ՝
---------- Ն. Հարությունյան	---------- Հ. Ալեքսանյան
Կ.Տ.	Կ.Տ.